

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՌԼԵՆ

ԻՆՁ ԹՎԱՑ

Այն ո՞վ էր՝ գիշերով տվեց անունս,
ի՞նձ հասավ միայն արձագանքը՝
քաղաքով մեկ թևածող ագռավի կռիմնչի պես:

Այս տապի մեջ,
ամառվա այս եռացող օդի մեջ ի՞նչ ագռավ.
հավանականն այս քաղաքում
մուրացիկներն են,
մարդասպանները,
ուտող–ուրացողները,
քցող–թռնողները,
սարքող–բռնողները,
հրեշտակաթև ու մարգարեաբար բարբառող
փրկիչները,
երբևէ վերադառնալու խոստումներով
մեկընդմիջտ հեռացող հարազատները,
ոհմակներով թափառող շները,
որ մի օր, անշուշտ, հոշոտելու են որևէ ուշացած
անցորդի,
փողոցներից շուկա քշված առևտրականները,
բլտի ու մարդու ականա սիրահարները,
ընդհանուր առմամբ՝ մի երեսուն խավ՝
սերված բանվորագյուղացիամտավորական
նախկին կոնգլոմերատից,
որ այլևս երբեք չեն գնա
Աստծո տաճարում աղոթելու,
որովհետև միևնույն է,
համատարած խառնաշփոթի մեջ
ամգամ Նա ձայները տարբերելու ունակ չէ:

Ինձ թվաց:

Ոչ ոք չի տվել իմ անունը,
ոչ ոք դրա ժամանակը չունի,
մանավանդ շոգի մեջ հունցվող գիշերով,
երբ սեփական յուղի մեջ տապակվող քաղաքը
փորձում է քնել
առավոտյան անհոգ արթնանալու մշտական
երազանքով:

Հավանաբար,
ագռավի կռիմնչը ես հորինեցի,
հավանաբար, շատ էի ուզում,

որ ինչ—որ մեկն իմ անունը տար՝
ինձ մոռացումից փրկելու համար—
թեկուզ ագռավը,
թեկուզ բուն...

ԱՆՍԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ

Մուրացկանը ձեռքը մեկնած՝
բառ է խնդրում,
ավազակը կոկորդիս դեմ է տվել դանակը՝
տողն է տանում,
մի ամբողջ քառատող խլեց ոստիկանը,
մի այդքան տվեցի հարկահանին,
հուզիչ մի քանի հատված
տարվեցի թղթախաղում,
մի homo ձեռք տվեց երեք որձ բառի՝
ինքս հրաժարվեցի դրանցից,
քնքուշ ու բարակիրան հորինվածքս
մի տիկին քաշեց իր անկողինը,
մի պարբերություն շուկայում դրեցի կշեռքին՝
կիլոգրամի վարկը փրկելու համար,
հարևանս փոխարինաբար տարավ
ու չվերադարձրեց մի ամբողջ էջ,
էպիտետներն սպառեցի բանավոր՝
մի գեղեցկուհու հարկ եղած միտքը ներարկելու
համար..

Կներեք՝ մնաց ընդամենը այսքանը,
որ ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: